Հասարակաց սրբբեցութեան անտարբեր մարդուն դէմքը յուզուեցաւ. յայտնի անձուկի և ուրախութեան մէջ էր։

Գնէլ նշմարեց որ դրասանգները յունարէն գիրեր կը կեղծէին. այս մտածութիւնը զինք հաճեց. հրճուանքով մը փորձեց ամբողջ խօսքը կարդալ. ճակատը խորշոմեցաւ, չէր կրնար յառաջ երթալ. ինչ լեզուով գրուած էր։ Իրեն ծանօթ յունարէնը չէր։ Գնէլ քանի մը բոպէ մը տածկոտ կեցաւ. և ահա դէմքը պայծառացաւ և ուրախութեան բուռն հրճուանքով մը ցցուց զայն փառանձեմի. յունարէն տառերով բայց հայերէն լեզուով գրուած էր կեցցէ Գնէլ, կեցցէ փառանձեմ։

Մայրենի լեզուն գրուած. Գնէլ զգաց որ պարսիկն ու հռոմայեցին կը դողային։ Մեքենաբար աչքերը շուրջը դարձուց այս ճարտարը գտնելու, բայց շուրջը ամբոխը՝ գինիէն ու բերկրութենէն յիմար՝ կը փոթորկէր ու կը ծփար։

Անտարբեր մարդուն դէմքին վրայ, որ աչքէ չէր փախցներ փառանձեմը, անմահութեան նշոյլներ փայլեցան։

Դղեակը լեցուեցաւ երգերով, ջահերով, ծաղիկներով, ծիծաղներով, պարերով, գինիներով։

Դղեակին վրայ երկինքը կապոյտ էր և աստղերը պայծառ։

Հ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ

Շարայարելի

Լաւ է՝ լուռ կենալ՝ քան պարապ խօսիլ։

Ցոյսը մարդուս համար՝ ուտելու, խմելու և ննջելու չափ հարկաւոր բան մ'է. (Մանթէկածծա)։

Պարկեշտութիւնը չրջանակ մ'է որ առաքինութիւնը փայլուն կը ցուցնէ. (Դիոգինէս)։

Ո՛վ որ կ'աշխատի չի ձանձրանար։ Աշխատութիւնը կ'ազնուացընէ և կը զուարթացընէ. ձանձրութիւնը կը մաշեցընէ և կը սպաննէ։

Իշխանական տիտղոսները ուրիշ բան չեն՝ բայց եթէ մի քանի վանկեր աւելի տապանագրի մը համար. (Կղեմես. Իդ.)։

Ո՛չ զոք քու կողմանէդ դատէ կամ դատաստանի կանչէ. (Ֆենելոն)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ

ԱԶԳՄԱՆՑ ՄՏԱՑ ԵՒ ՍՐՏԻ

1842

ՆՈՅՆԵՄԲԵՐ

1

Ամենայն ժամը հնչեալը մէն մի տառք են ժամանակի։

2

Երբեմն փորրիկ է խօսք արկեալ ի միտս, բուսուցանէ ծառս մեծամեծս։

3

Որ գետնախշոի մեռանի և որ յերիզապատ գահոյս՝ նոյնօրինակ թողուն զի ցուրտ։

3

Ի յիշատակի մեռելոց թուի բանալ ամենայն գերեզմանաց, նա և ամենայն սիրտ փոխի ի գերեզման և գտանէ անդ զսիրելիս իւր։

3

Են որոց ամենայն կեանք օրհասք են, մահ հանգուցանէ զնոսա։

5

Ընդ դարևանդիւ ստուերախիտ բլրոյ երկու լուսաղբերք, աչք ընդ յօնօք։

6 Յերազի

Է և արշալուսոյն լոյս իւր։

6

Են հիւանդութիւնք սեփականք տիոց. այլ մահ ամենայն չափու հասակի պատկանի։

6

Ձրագ՝ ի բարձրաւանդակի՝ ոչ մերժէ զխաւար ստորին. բազում և այսպէս խորհուրդք վսեմք։

6

Ցոյս բազում այն է զի պղպջակ է անոտի. բազմաց տեսեալ զի սահի զմկանմամբք՝ հաստատուն համարին, և նա իսկոյն պայթի։

digitised by A.R.A.R.@

7 Ցերազի

Յն որք անուամբ մեծի ուրուք անմահ առնեն զզրութիւն իւրեանց, և են որք գրութեամբ իւրեանց՝ մեծ և անմահ առնեն զոք։

7

Զմեռեալ եղեգն ճահճին մեռելոյ կենդանացուցանէ փչումն հովուին։

7

Սէր պտուղ տհաս է ի քիմա մանկանց, հարեալ ի գեղն ուտեն կեղեօք՝ և տապանան տենդիւ ի ծանրանալ ստամոքացն։

7

Ցոյս յամենայն երկրի բուսանի, այլ ոչ միշտ ամէ։

10

Ժամացոյց սիրտ է ժամանակի յաչս երևեալ։

10

Ի միտրս մանկան իմաստ գեղեցիկ Գունագոյն թիթեռն յերփնազարդ ծաղիկ։

11

Աղբատ որ յաջողեալ զգենուցու պերճ և սիգայցէ՝ թիթրան նման է որ ոչ յիշէ զխորխ իւր։

11

Անօրինին յեղակարծ զգաստութիւն, նման է առն որ զարթնուցու ի հասարակ գիշերի, և անդրէն ննջիցէ ի խաւարի։

13

Գեղեցիկ պտուղն մահացոյց զԱդամ, ցամաք փայտ խաչին աստուածացոյց զնա։

14–15 Ցերազի

Ի պարզ գիշերի աստեղք ծածանեալք յերկինս թուին երկթևիք կամեցողք վայրարերիլ, և ծաղկունք մարգաց՝ կամեցողք առ նոսա վերաթևել։

17

Կէս քաւութիւն է խոստովանել զյանցանս։

18

Կարօտութիւն մերժէ զհեշտութիւն։

18

Ցառաջադէմ խաղայ ձմեռն լծեալ ըզհիւսսի ի կառս իւր։

24

Գործք երկարեն զկեանս անդր քան զմահ։

24

Ժամանակ ժիր սուրհանդակ է. տանի զոր և տան նմա։

26

Ներութիւն կենդանի մատեան աւանդութեան։

27

Թէ անկանին պղնձի անդրիք՝ մի՛ յուսացին կաւեղէնք կալ կանգուն։ (Լուեալ զմահ Ե. Սիմոնի Քաղդէացւոյ)։

27

Ամենայն վէր ցաւ մի յաւելու. մահ զամենայն վէրս բանայ։

27

Ի ծնունդ մանկան ոչ ոք յիշէ զծնունդ իւր, այլ ի մահու ամենայն ոք զմահ իւր յիշէ։

27

Ի միում անկեան թատեր աշխարհի ողբերգութիւնք լինին, ի միւսում կատակերգութիւնք։

28

Փոքու նաւակաւ մարմնոյն յածի հոգի ի ծով աշխարհի. ափունք չեն հեռի. և ամենայն ուրեք մերձ կան մահահանգիստք, և ի խռովութեան և ի խաղաղութեան անդ։

29

Ամք բոլորեալք ողջունեն զմեզ՝ գնան ասելով. ինայեցաք մեք ի քեզ, այլ յետագայքս ոչ։

30

Որ զժամանակ յօգուտ ծախէ, զթեւս նորա ունի ի թռիչս անդ։

Հ. Ղ. Ալիշան

Շարայարելի

digitised by A.R.A.R.@